

ՀՀ ֆինանսների նախարարության ք.Երևան, Մ.Աղամյան-1 հասցեում գտնվող վարչական շենքի ընթացիկ նորոգման աշխատանքների  
ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ  
N << ՀՀ-ՖՆ-ԲԸՀԱՇԶԲ-14/1 >>

ք. Երևան

«16» սեպտեմբերի

2014թ.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ի դեմս նախարարության աշխատակազմի ղեկավար Ա.Արզումանյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Պատվիրատու, մի կողմից և «ԻՄԷԳՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Ռ.Մանուչարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Կապալառու, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալ մասին.

### 1. Պայմանագրի առարկան

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի N 1 Հավելվածով (Այսուհետև Հավելված N 1) սահմանված տեխնիկական բնութագիր-ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված ՀՀ ֆինանսների նախարարության ք.Երևան, Մ.Աղամյան-1 հասցեում գտնվող վարչական շենքի ընթացիկ նորոգման աշխատանքները (այսուհետև՝ Աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված Աշխատանքը և վարձատրել դրա համար՝ Աշխատանքները սույն պայմանագրի պահանջներին համապատասխան Կապալառուի կողմից կատարելու դեպքում:

1.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքները կատարվում են տեխնիկական բնութագրին և նախագծային փաստաթղթերի պահանջներին, սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող Աշխատանքի տեխնիկական բնութագիր-ծավալաթերթ-նախահաշվին և օրացուցային գրաֆիկին համապատասխան՝ ղեկավարվելով ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին:

1.3 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքները իրականացվում է այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման հիման վրա՝ համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 75 օրացուցային օրվա ընթացքում:

Սույն պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են երկողմ համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

### 2. Կապալառուի միջոցներով աշխատանքները կատարելը

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի հայեցողությամբ՝ ինքնուրույն իր ուժերով, սույն պայմանագրի N 1 Հավելվածով նախատեսված սարքավորումներով, նյութերով և միջոցներով, կամ ենթակապալառուների ներգրավմամբ:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած սարքավորումների և նյութերի որակի համար:

### 3. Կողմերի իրավունքները և պարտականությունները

#### 3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած Աշխատանքի ընթացքը և որակը.

3.1.2 Կապալառուի կողմից սույն պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել Աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, սույն պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում Աշխատանքի կատարումը կամ Աշխատանքը կատարում է անբան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է սույն պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված Աշխատանքը չի համապատասխանում նախագծային փաստաթղթերով և տեխնիկական բնութագիր-ծավալաթերթ-նախահաշվով սահմանված պահանջներին,



դ) Կապալառուի կողմից խախտվել են սույն պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները:

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Փաստացի կատարված Աշխատանքը ընդունելուց առաջ պահանջել Կապալառուից իրեն հանձնելու Աշխատանքի անավարտ մասի վերաբերյալ սպառիչ տեղեկատվություն սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով վաղաժամկետ դադարեցնելու դեպքում:

### 3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին սույն պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով:

3.2.2 Սույն պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ գնել և ընդունել կատարված Աշխատանքը (դրա արդյունքը), իսկ կատարված Աշխատանքում թերություններ կամ նախագծային փաստաթղթերով և տեխնիկական բնութագիր-ծավալաթերթ-նախահաշվով շեղումներ հայտնաբերելու դեպքում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին:

3.2.3 Սույն պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել աշխատանքների կատարումը հաստատող փաստաթղթերով հիմնավորված վերջինիս վճարման ենթակա գումարները:

### 3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Սույն պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում Աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու սույն պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը՝ փաստացի կատարված աշխատանքների կատարումը հաստատող փաստաթղթերի հիման վրա:

3.3.2 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և սույն պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

### 3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 80 /ություն/ տոկոսը կատարել անձամբ, սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծային փաստաթղթերին, տեխնիկական բնութագիր-ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

3.4.2 Կատարել Աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում ՀՀ օրենսդրությանը, սույն պայմանագրի դրույթներին, ինչպես նաև նախագծային փաստաթղթերին և տեխնիկական բնութագիր-ծավալաթերթ-նախահաշվին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորումների անհատական փորձարկում, մասնակցել սարքավորումների համալիր փորձարկմանը, որի վերաբերյալ Պատվիրատուին ներկայացնել «Փորձարկման արձանագրություն»:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է Աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Սույն պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից Աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել Աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Սույն պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով սույն պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են գալիս թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները: Սույն պայմանագրով կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները ներկայացված են սույն պայմանագրի N 3 Հավելվածում: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են գալիս թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում, վերացնել թերությունները:

3.4.8 Սույն պայմանագրի կատարման (կանխավճարի) ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. Աշխատանքի հանձնման և ընդունման կարգը



4.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետ՝ արձանագրություն, Հավելված N 4) ստորագրմամբ:

Աշխատանքի կամ դրա մի մասի կատարման պահից 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուն Պատվիրատուին է ներկայացնում այդ աշխատանքների պատշաճ կատարման մասին իր կողմից ստորագրված կատարողական ակտը և հանձնման-ընդունման արձանագրությունը 4(չորս) օրինակ բնօրինակից:

4.2 Արձանագրությունն ստորագրվում է, եթե կատարված Աշխատանքը համապատասխանում է նախագծային փաստաթղթերին և տեխնիկական բնութագիր-ծավալաթերթ-նախահաշվին և սույն պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

1) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները:

2) Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.3 Աշխատանքի կամ սույն պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծային փաստաթղթերին և տեխնիկական բնութագիր-ծավալաթերթ-նախահաշվին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ թերությունների արձանագրություն՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքները:

4.4 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 30(երեսուն) օրյա ժամկետում Կապալառուին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Աշխատանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

4.5 Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

## 5. Աշխատանքի գինը և վարձատրությունը

5.1. Սույն պայմանագրով Կապալառուի կատարման ենթակա Աշխատանքի ընդհանուր գինը կազմում է 293 249 689 (երկու հարյուր ինսուներեք միլիոն երկու հարյուր քառասունհինգ հազար վեց հարյուր ութսունհինգ) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.1.1 Պայմանագրի գնից՝ 50%-ը՝ Պատվիրատուն փոխանցում է Կապալառուի բանկային հաշվին՝ որպես կանխավճար՝ Կապալառուի կողմից կանխավճարի ապահովում ներկայացնելու դեպքում:

Կանխավճարի մարումն իրականացվում է արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է պայմանագրի կանխավճարի տրամադրումից հետո ներկայացվող ընդհանուր գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ:

5.2 Պատվիրատուն կատարված աշխատանքների դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի 8.2 կետով նախատեսված կնքվելիք համաձայնագրի վճարման ժամանակացույցով նախատեսված ամիսներում:


5.3 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու և (կամ) Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

## 6. Կողմերի պատասխանատվությունը

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Սույն պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից Աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասներորդական) տոկոսի չափով:



6.4 Սույն պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

### 7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՄ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

### 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Այն դեպքում, երբ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Կապալառուին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Կապալառուն պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

8.2 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից պահից և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Սույն պայմանագրի N 1 հավելվածով նախատեսված Աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման հիման վրա:

Սույն պայմանագիրը լուծարվում է, եթե այն կնքվելու օրվան հաջորդող տարվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում:

Սույն պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Սույն պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:


8.4 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքների ծավալների կամ ձևերի փոփոխության, որոնք հանգեցնում են կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.5 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձևեր քերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված



կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

2) պայմանագրով նախատեսված Աշխատանքի շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գները կորոշվեն և դրանց փոփոխությունը կգնահատվի նախապես համաձայնեցվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ, որի վերաբերյալ կկնքվի լրացուցիչ համաձայնագիր:

Աշխատանքների կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը:

8.6 Շինարարության օբյեկտի շինարարական աշխատանքների դադարեցումը եւ կոնսերվացումը կարող է կատարվել միայն պատվիրատուի համաձայնությամբ: Կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում Աշխատանքների դադարեցման և շինարարության կոնսերվացման համար անհրաժեշտ ողջամիտ ծախսերը կատարում է այն կողմը, որի նախաձեռնությամբ կատարվում է շինարարական աշխատանքների դադարեցումը և կամ կոնսերվացումը:

8.7 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.8 Սույն պայմանագիրը կազմված է \_\_\_\_\_ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 4 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.9 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

**9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

**Պատվիրատու**

ՀՀ ֆինանսների նախարարություն  
ք. Երևան, Մ.Աղայան-1  
ՀՀ ֆինանսների նախարարության  
աշխատակազմի գործառնական վարչություն  
Հ/Հ 900013202016, 900013574018, 900011017101  
ՀՎՀՀ 02629081  
ՀՀ ՖՆ աշխատակազմի ղեկավար՝  
**Ա.Արզումանյան**



**Կապալառու**

«ԻՄԷԳՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ  
Ք.Երևան, Թբիլիսյան խճուղի-25  
«Ակբա Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ  
  
Հ/Հ 220003335589000  
ՀՎՀՀ 00847479  
«ԻՄԷԳՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի տնօրեն՝  
**Ռ.Մանուչարյան**



*Handwritten signatures in blue ink at the bottom left of the page.*

**ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ**

**ՀՀ ֆինանսների նախարարության ք.Երևան, Մ.Աղամյան-1 հասցեում գտնվող վարչական շենքի ընթացիկ  
նորոգման աշխատանքներ**

**Աշխատանքների տեխնիկական բնութագիր**

- Նորոգվող միջանցքների և աշխատասենյակների լուսավորության ջահերի ապամոնտաժում:
- Փայտյա դռների, ներառյալ փայտյա պառակալների քանդում:
- Պատերի հին ներկը չվնասելով առկա թույլ հոսանքի ցանցերի մաքրում:
- Պատերի ծեփամածկում և ներկում լատեքսային ներկով:
- Աշխատասենյակներում, ինչպես նաև թիվ 2, թիվ 4 և թիվ 5 աստիճանավանդակներում /ներառյալ աստիճանաքայլերի տակի հատվածն ամբողջությամբ/ կախովի առաստաղի կառուցում՝ զիպսակարտոնե 8.5մմ հաստության սալերով, ցինկապատ թիթեղից պրոֆիլներով կարկասի վրա, ծեփամածկում և ներկում լատեքսային ներկով:
  - Առկա հոսանքի վահանակների կարգաբերում, աշխատասենյակների ներքին էլեկտրոմոնտաժի իրականացում նոր տեղադրված բաժանման տուփերից: Ապամոնտաժված լուսավորության ջահերի նույնությամբ իրենց տեղերում մոնտաժում:
  - Դռների բացվածքների չափերի փոքրացում ցինկապատ պրոֆիլներով կարկասի վրա 12.5մմ զիպսակարտոնե սալերով, պառակալների պատի հետ շփման հատվածի 50սմ լայնությամբ անընդհատ բարձրորակ սվաղում գաջի շաղախով, իդեալական հարթության ապահովումով:
  - Աշխատասենյակներում միջանցքին կից պատերի վրա գոյություն ունեցող խոռոչների, որոնք ծառայել են որպես բաժանման տուփեր ներքին հեռախոսացնցի համար, 8.5մմ զիպսակարտոնե սալերով փակում, ծեփամածկում և ներկում: Նույն խոռոչների միջանցքներում պլաստմասե դռնակներով փակում:
  - Աստիճանավանդակներում /թիվ 2,3,4,5 / մետաղական բազրիքների ապամոնտաժում, նոր բազրիքների տեղադրում, պատվիրատուի կողմից տրամադրված տեսքի, տեսակի և որակի: Աստիճանաքայլերն ու աստիճանահարթակների ողորկ մակերեսի կացնահարում և երեսապատում պատվիրատուի կողմից տրամադրված տեսքի, տեսակի և որակի կերամոզրանիտե սալիկներով:
  - Կենտրոնական թիվ 1 և ոչ կենտրոնական թիվ 3 աստիճանավանդակների աստիճանաքայլերի և հարթակների մարմարե երեսապատվածքի թարմացման նպատակով հղկում, անհրաժեշտության դեպքում վնասված քարերի փոխում:
  - Առկա մետաղապլաստե պատուհանների ապամոնտաժված հին օդորակիչների հատվածներում 4+4 մմ ապակե փաթեթների տեղադրում:
  - Նախատեսված է նաև յուրաքանչյուր աշխատատեղի հաշվարկով 200x1200 չափի լամինացված վահանակների տեղադրում բազկաթոռների պատի հետ հպման հատվածում: Վահանակների տեղադրում գույքի ձեռքբերումից հետո, գույնը համապատասխանեցնելով աշխատատեղանների գույնի հետ:

N5 չափաբաժնում պատերի և առաստաղների ներկումը նախատեսված է բարձրորակ:

**Պատվիրատու**

ՀՀ ֆինանսների նախարարություն  
ք. Երևան, Մ.Աղամյան-1

ՀՀ ֆինանսների նախարարության  
աշխատակազմի գործառնական վարչություն  
Հ/Հ 900013202016, 900013574018, 900011017101  
ՀՎՀՀ 02629081

ՀՀ ՖՆ աշխատակազմի ղեկավար՝  
**Ա.Արզումանյան**



**Կապալառու**

«ԻՄԷԲՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ

Ք.Երևան, Թբիլիսյան խճուղի-25  
«Ակբա Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ

Հ/Հ 220003335589000  
ՀՎՀՀ 00847479

«ԻՄԷԲՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի տնօրեն՝  
**Ռ.Մանուչարյան**



*Handwritten signatures in blue ink at the bottom of the page.*

**ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ\***

ՀՀ ֆինանսների նախարարության ք.Երևան, Մ.Աղամյան-1 հասցեում գտնվող վարչական շենքի ընթացիկ նորոգման աշխատանքների կատարման

Հ/Հ	Օբյեկտի անվանումը	Ծավալը ( ՀՀ դրամ)	Աշխատանքների կատարման ժամկետը
	ՀՀ ֆինանսների նախարարության ք.Երևան, Մ.Աղամյան-1 հասցեում գտնվող վարչական շենքի ընթացիկ նորոգման աշխատանքներ /Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ/		
1	ՀՀ ֆինանսների նախարարության ք.Երևան, Մ.Աղամյան-1 հասցեում գտնվող վարչական շենքի ընթացիկ նորոգման աշխատանքներ	293 249 689	Աշխատանքները իրականացվում է այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման հիման վրա՝ համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 75 օրացուցային օրվա ընթացքում:
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>		293 249 689	

**Պատվիրատու**

ՀՀ ֆինանսների նախարարություն  
ք. Երևան, Մ.Աղամյան-1

ՀՀ ֆինանսների նախարարության  
աշխատակազմի գործառնական վարչություն  
Հ/Հ 900013202016, 900013574018, 900011017101  
ՀՎՀՀ 02629081

ՀՀ ՖՆ աշխատակազմի ղեկավար՝  
**Ա.Արզումանյան**

(ստորագրություն)

Գ.Տ



**Կապալառու**

«ԻՄԷԳՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ

Ք.Երևան, Թբիլիսյան խճուղի-25  
«Ակբա Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ

Հ/Հ 220003335589000  
ՀՎՀՀ 00847479

«ԻՄԷԳՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի տնօրեն՝  
**Ռ.Մանուչարյան**

(ստորագրություն)

Ռ.Տ



*Handwritten signature in blue ink.*

**Կապալի օբյեկտում տեղադրվող և մոնտաժվող սարքավորումների և նյութերի երաշխիքային նվազագույն ժամկետները**

**ՀՀ ֆինանսների նախարարության ք.Երևան, Մ.Աղամյան-1 հասցեում գտնվող վարչական շենքի ընթացիկ նորոգման աշխատանքների կատարման**

Կապալի օբյեկտի երաշխիքային ժամկետը՝ մեկ տարի				
h/h	Անվանումը	Չափի միավորը	Տեխ. բնութագիր	Երաշխիքային ժամկետ
1.	Գիպսակարտոնե կախովի առաստաղ	քմ	Գիպսակարտոնե առաստաղ, 8.5մմ և 12.5մմ հաստության	1 տարի
2.	Հատակի երեսպատման խեցեալ	քմ	Բարձրորակ, եվրոպական արտադրության	1 տարի
3.	Մետաղական բազրիք փայտե բռնածողով h-0.9մ	զմ	Կրող դետալները պողպատյա, գործարանային փոշեներկված, բռնածողը պինդ տեսակի փայտանյութից, հղկված, բազմաշերտ լաքապատած	1 տարի
4.	Մետաղական բազրիք փայտե բռնածողով, փայտե ներդիր դետալներով h-0.9մ	զմ	Կրող դետալները պողպատյա, գործարանային փոշեներկված, բռնածողը պինդ տեսակի փայտանյութից, հղկված, բազմաշերտ լաքապատած, դեկորատիվ մետաղական տարրերի համադրմամբ	1 տարի
5.	Կերամոգրանիտե աստիճանաքայլ	քմ	Բարձրորակ, եվրոպական արտադրության 30*60սմ չափի	1 տարի
6.	Կերամոգրանիտե սալիկ	քմ	Բարձրորակ, եվրոպական արտադրության 30*60սմ չափի	1 տարի
7.	Հախճասալ	քմ	Բարձրորակ, եվրոպական արտադրության	1 տարի
8.	Հախճապակե գուգարանակոնք	հատ	Բարձրորակ, եվրոպական արտադրության	1 տարի
9.	Հախճապակե լվացարան	հատ	Բարձրորակ, եվրոպական արտադրության	1 տարի
10.	Հաղորդալարեր բազմաջիղ պղնձյա 2x1.5 մմ <sup>2</sup> ; 2x2.5 մմ <sup>2</sup> ; 2x4 մմ <sup>2</sup> հաստությունով	զ/մ	բարձր որակի, կրկնակի պատյանով /սարքավորումների անհրաժեշտ լարմամբ հոսանք ապահովելու համար/	1 տարի
11.	Հասցեա-անալոգային ծխային ազդասարք	հատ	Միջավայրի օպտիկական խտության չափման տիրույթը կազմում է 0,005 – 0,4 dB/m, տվիչի զգայունությունը՝ 0,05 – 0,2 dB/m, հայտնաբերման մակերեսը կազմում է մինչև 85 մ.ք., աշխատանքային ջերմաստիճանային տիրույթը կազմում է -3 °C մինչև +70 °C, քաշը՝ 0.1 կգ, հատուկ հնարավորություններն են. ծխի խցիկի մաքրումն իրականացվում է առանց տվիչը քանդելու, ծխի խցիկը պաշտպանված է փոշուց մոտոսբային լաբիրինտային կոնստրուկցիայի հաշվին ԷՄ 212-92	1 տարի
12.	Ջեռուցման պոլիպրոպիլենե խողովակներ d=40	զմ	PN 10 նախատեսված տաք ջրի համար, պատի հաստությունը 3.7մմ	1 տարի
13.	Ջեռուցման պոլիպրոպիլենե խողովակներ d=20	զմ	PN 10 նախատեսված տաք ջրի համար, պատի հաստությունը 2մմ	1 տարի

*Handwritten signature*



14.	Այլումինե ջեռուցման մարտկոց	սեկցիա	H=350 մմ , 0.10 Կվտ,	1 տարի
15.	Այլումինե ջեռուցման մարտկոց	սեկցիա	H=500 մմ , 0.12 Կվտ,	1 տարի

**Պատվիրատու**

ՀՀ ֆինանսների նախարարություն  
ք. Երևան, Մ.Ադամյան-1

ՀՀ ֆինանսների նախարարության  
աշխատակազմի գործառնական վարչություն  
Հ/Հ 900013202016, 900013574018, 900011017101  
ՀՎՀՀ 02629081

ՀՀ ՖՆ աշխատակազմի ղեկավար՝  
**Ա.Արզումանյան**



**Կապալառու**

«ԻՄԷԳՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ  
Ք.Երևան, Թբիլիսյան խճուղի-25  
«Ակբա Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ

Հ/Հ 220003335589000  
ՀՎՀՀ 00847479

«ԻՄԷԳՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ ի տնօրեն՝  
**Ռ.Մանուչարյան**



*(Handwritten signatures)*

Կատարող

Պատվիրատու

\_\_\_\_\_  
\_\_\_\_\_  
գտնվելու վայրը \_\_\_\_\_  
հհ \_\_\_\_\_  
\_\_\_\_\_  
հվհհ \_\_\_\_\_

\_\_\_\_\_  
\_\_\_\_\_  
գտնվելու վայրը \_\_\_\_\_  
հհ \_\_\_\_\_  
\_\_\_\_\_  
հվհհ \_\_\_\_\_

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N  
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

<< \_\_\_\_ >> << \_\_\_\_\_ >> 20 թ.

Պայմանագրի անվանումը՝ \_\_\_\_\_

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ << \_\_\_\_ >> << \_\_\_\_\_ >> 20 թ.

Պայմանագրի համարը՝ \_\_\_\_\_

Պատվիրատուն՝ ի դեմս \_\_\_\_\_ և Կատարողը՝ ի  
դեմս \_\_\_\_\_, հիմք ընդունելով, որ պայմանագրով  
նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները, մատակարարումները և ծառայությունները (այսուհետև՝  
աշխատանքներ) համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման  
ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Կատարողը \_\_\_\_\_ 20\_\_թ-ից \_\_\_\_\_ 20\_\_ թ. ընկած ժամանակահատվածում  
իրականացրել է հետևյալ աշխատանքները

Գնման առարկայի անվանումը	Գնման առարկայի քանակական ցուցանիշը	Աշխատանքների կատարման ժամկետը	Վճարման ենթակա գումարը (հազար դրամ)	Վճարման ժամկետը (ըստ ժամա- նակացույցի)

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն  
արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց

Աշխատանքը ընդունեց

ստորագրություն

ստորագրություն

Ազգանուն, Անուն

Ազգանուն, Անուն

Կ.Տ.

Կ.Տ.

ՀՀ ֆինանսների նախարարության ք.Երևան, Մ.Ադամյան-1 հասցեում գտնվող վարչական շենքի ընթացիկ նորոգման  
աշխատանքներ

**Ծավալաթերթ-նախահաշիվ**


h/h	Աշխատանքների և ծախսերի անվանումը	Չափի միավոր	Քանակը	Գինը	Գումարը
1	2	3	3	5	6
<b>Մաս N-1</b>					
<b>ՀՀ ֆինանսների նախարարության կենտրոնական և օժանդակ աստիճանավանդակների / թվով 4 հատ / նորոգման աշխատանքներ</b>					
<b>Աստիճանավանդակ N1</b>					
<b>Քանդման աշխատանքներ</b>					
1	Գաջի սվաղի քանդում պատերից	100 մ <sup>2</sup>	1.96	19700.00	38612.00
2	Պատերի և առաստաղների մաքրում հին ներկից	100մ <sup>2</sup>	3.84	10400.00	39936.00
3	Շին.աղբի բարձում ինքնաթ.ծեքով	տն	10.57	770.00	8138.90
4	Տեղափոխում 13կմ	տն	10.57	3200.00	33824.00
<b>Չարդարման աշխատանքներ</b>					
1	Պատերի սվաղում գաջի շաղախով	100 մ <sup>2</sup>	1.57	237630.00	373079.10
2	Պատերի քսահարթում գաջի շաղախով բարելավված որակի	100 մ <sup>2</sup>	0.39	138200.00	53898.00
3	Պատերի գաջի սվաղի նորոգում մինչև 10մ <sup>2</sup>	մ <sup>2</sup>	65.24	2640.00	172233.60
4	Լույնը առաստաղների	մ <sup>2</sup>	36.99	3055.00	113004.45
5	Պատերի բարձրորակ ներկում կիսափայլուն լատեքսային ներկով	100 մ <sup>2</sup>	4.35	274750.00	1195162.50
6	Առաստաղների բարձրորակ ներկում կիսափայլուն լատեքսային ներկով	100 մ <sup>2</sup>	2.47	274750.00	678632.50
7	Դռների և պատուհանների թեքությունների ներկում կիսափայլուն լատեքսային ներկով	100 մ <sup>2</sup>	0.28	274750.00	76930.00
8	Աստիճանավանդակի մարմարե մակերեսների հղկում	100մ <sup>2</sup>	1.939	829915.00	1609205.19
<b>Աստիճանավանդակ N2</b>					
<b>Քանդման աշխատանքներ</b>					
1	Առկա մետաղական բազրիքի ապամոնտաժում	100մ	32.30	50170.00	1620491.00
2	Գաջի սվաղի քանդում պատերից	100 մ <sup>2</sup>	1.19	19700.00	23443.00
3	Պատերի մաքրում հին ներկից	100մ <sup>2</sup>	1.06	10400.00	11024.00
4	Շին.աղբի բարձում ինքնաթ.ծեքով	տն	6.44	770.00	4958.80
5	Տեղափոխում 13կմ	տն	6.44	3200.00	20608.00
<b>Բազրիք</b>					
1	Մետաղական բազրիքի տեղադրում փայտե բռնածողով / h-0,9մ /	մ	32.3	53750.00	1736125.00
<b>Երեսապատման աշխատանքներ</b>					
1	Աստիճանաքայլերի երեսապատում կերամոզրամիտ սալերով / IMOLA, Micron S60BG 30x60 չափի աստիճան /	մ <sup>2</sup>	48.230	56210.00	2711008.30
2	Աստիճանաքայլերի ճակատային հատվածի երեսապատում կերամոզրամիտ սալերով / IMOLA, Micron 36BG 30x60 չափի սալիկ /	մ <sup>2</sup>	20.670	37050.00	765823.50
3	Աստիճանահարթակների երեսապատում կերամոզրամիտ սալերով / IMOLA, Micron 36BG 30x60 չափի սալիկ /	մ <sup>2</sup>	27.320	31840.00	869868.80
4	Կերամոզրամիտ սալերով շրիշակների կառուցում / IMOLA, Micron 36BG 30x60 չափի սալիկ /	մ <sup>2</sup>	13.295	44940.00	597477.30
<b>Չարդարման աշխատանքներ</b>					
1	Պատերի սվաղում գաջի շաղախով	100 մ <sup>2</sup>	0.95	237630.00	225748.50
2	Պատերի քսահարթում գաջի շաղախով բարելավված որակի	100 մ <sup>2</sup>	0.24	138200.00	33168.00
3	Պատերի գաջի սվաղի նորոգում մինչև 10մ <sup>2</sup>	մ <sup>2</sup>	39.74	2640.00	104913.60
4	Կախովի առաստաղի իրականացում 8,5մ գիպակարտոնե սալերով ցինկապատ մետաղական պրոֆիլներով կարկասի վրա	մ <sup>2</sup>	74.36	4245.00	315658.20
5	Կախովի առաստաղի պատրաստման համար պրոֆիլի արժեքը	գմ	316.03	570.00	180137.10
6	Պատերի բարելավված ներկում կիսափայլուն լատեքսային ներկով	100 մ <sup>2</sup>	2.65	229975.00	609433.75
7	Առաստաղների բարելավված ներկում կիսափայլուն լատեքսային ներկով	100 մ <sup>2</sup>	0.74	229975.00	170181.50
8	Դռների և պատուհանների թեքությունների ներկում կիսափայլուն լատեքսային ներկով	100 մ <sup>2</sup>	0.17	274750.00	46707.50
9	Սվաղի անկյունակ	գմ	43.00	120.00	5160.00
10	Կապրոնե ցանց ներքին հարդարման համար	100 մ <sup>2</sup>	0.13	20135.00	2617.55
<b>Էլեկտրական լուսավորության ցանց N2</b>					
1	Լուսատու առաստաղային լուսահեղուկային լամպով 220Վ, 2x36Վտ / կոմպլեկտ - լամպով, մեկնարկիչով/	հատ	6	18000.00	108000.00

*Handwritten signature*



1	2	3	3	5	6
2	Լուսատու էվակուացիոն լյումինեսցենտային լամպով, 220Վ, 1x18Վտ	հատ	2	19500.00	39000.00
3	Հաղորդալարի անցկացում պղնձե, մեկուսացված, բաժանիչ հիմքով, հատվածքը ՊՊՎ 2*2.5մմ2	100 մ	0.80	37000.00	29600.00
4	Հաղորդալարի անցկացում պղնձե, մեկուսացված, բաժանիչ հիմքով, հատվածքը ՊՊՎ 1*2.5մմ2	100 մ	0.80	18000.00	14400.00
5	Անջատիչ նորմալ տարբերակի, միաբևեռ, թաքնված տեղադրման համար 220Վ,6Ա	հատ	3.0	1950.00	5850.00
6	Տուփ վարդակների և անջատիչների	100հտ	0.03	55000.00	1650.00
7	Ելուղավորիչ տուփ	100հտ	0.02	58000.00	1160.00
8	Երկաթակապ	100հտ	1.80	1000.00	1800.00
9	Ակոսների փորում 20*40	100մ	0.80	45000.00	36000.00
10	Ակոսագծերի գաջի սվաղում	100մ <sup>2</sup>	0.048	250000.00	12000.00
<b>Աստիճանավանդակ 3</b>					
<b>Քանդման աշխատանքներ</b>					
1	Առկա մետաղական բազրիքի ապամոնտաժում	100մ	0.24	50170.00	12040.80
<b>Բազրիք</b>					
1	Բազրիք մետաղական, փայտից ներդիր դետալներով և փայտե բռնածողով / հ-0,9մ /	մ	24.1	75960.00	1830636.00
<b>Հարդարման աշխատանքներ</b>					
1	Աստիճանավանդակի մարմարե մակերեսների հղկում	100մ <sup>2</sup>	0.823	829915.00	683020.05
<b>Էլեկտրական լուսավորության ցանց 3</b>					
1	Լուսատու առաստաղային լյումինեսցենտային լամպով 220Վ, 2x36Վտ / կոմպլեկտ - լամպով, մեկնարկիչով/	հատ	6	18000.00	108000.00
2	Լուսատու էվակուացիոն լյումինեսցենտային լամպով, 220Վ, 1x18Վտ	հատ	2	19500.00	39000.00
3	Հաղորդալարի անցկացում պղնձե, մեկուսացված, բաժանիչ հիմքով, հատվածքը ՊՊՎ 2*2.5մմ2	100 մ	1.20	37000.00	44400.00
4	Հաղորդալարի անցկացում պղնձե, մեկուսացված, բաժանիչ հիմքով, հատվածքը ՊՊՎ 1*2.5մմ2	100 մ	1.20	18000.00	21600.00
5	Անջատիչ նորմալ տարբերակի, միաբևեռ, թաքնված տեղադրման համար 220Վ,6Ա	հատ	4.0	1950.00	7800.00
6	Տուփ վարդակների և անջատիչների	100հտ	0.04	55000.00	2200.00
7	Ելուղավորիչ տուփ	100հտ	0.04	58000.00	2320.00
8	Երկաթակապ	100հտ	2.20	1000.00	2200.00
9	Ակոսների փորում 20*40	100մ	1.00	45000.00	45000.00
10	Ակոսագծերի գաջի սվաղում	100մ <sup>2</sup>	0.06	250000.00	15000.00
<b>Աստիճանավանդակ 4</b>					
<b>Քանդման աշխատանքներ</b>					
1	Առկա մետաղական բազրիքի ապամոնտաժում	100մ	0.24	50170.00	12040.80
2	Գաջի սվաղի քանդում պատերից	100 մ <sup>2</sup>	1.28	19670.00	25177.60
3	Պատերի մաքրում հին ներկից	100մ <sup>2</sup>	1.13	10400.00	11752.00
4	Շին.աղբի բարձում ինքնաթ.ծեռքով	տն	6.89	770.00	5305.30
5	Տեղափոխում 13կմ	տն	6.89	3200.00	22048.00
<b>Բազրիք</b>					
1	Մետաղական բազրիքի տեղադրում փայտե բռնածողով / հ-0,9մ /	մ	24	53750.00	1290000.00
<b>Երեսապատման աշխատանքներ</b>					
1	Աստիճանաքայլերի երեսապատում կերամոզրանիտե սալերով / IMOLA, Micron S60BG 30x60 չափի աստիճան /	մ <sup>2</sup>	42.315	56210.00	2378526.15
2	Աստիճանաքայլերի ճակատային հատվածի երեսապատում կերամոզրանիտե սալերով / IMOLA, Micron 36BG 30x60 չափի սալիկ /	մ <sup>2</sup>	18.135	37050.00	671901.75
3	Աստիճանահարթակների երեսապատում կերամոզրանիտե սալերով / IMOLA, Micron 36BG 30x60 չափի սալիկ /	մ <sup>2</sup>	36.680	31840.00	1167891.20
4	Կերամոզրանիտե սալերով շրիշակների կառուցում / IMOLA, Micron 36BG 30x60 չափի սալիկ /	մ <sup>2</sup>	13.326	44940.00	598870.44
<b>Հարդարման աշխատանքներ</b>					
1	Պատերի սվաղում գաջի շաղախով	100 մ <sup>2</sup>	1.02	237630.00	242382.60
2	Պատերի քսահարթում գաջի շաղախով բարելավված որակի	100 մ <sup>2</sup>	0.26	138200.00	35932.00
3	Պատերի գաջի սվաղի նորոգում մինչև 10մ <sup>2</sup>	մ <sup>2</sup>	42.54	2640.00	112305.60
4	Կախովի առաստաղի իրականացում 8,5մ գիպսակարտոնե սալերով ցինկապատ մետաղական պրոֆիլներով կարկասի վրա	մ <sup>2</sup>	94.38	4245.00	400643.10
5	Կախովի առաստաղի պատրաստման համար պրոֆիլի արժեքը	գմ	401.12	570.00	228638.40
6	Պատերի բարելավված ներկում կիսափայլուն լատեքսային ներկով	100 մ <sup>2</sup>	2.84	229975.00	663129.00
7	Առաստաղների բարելավված ներկում կիսափայլուն լատեքսային ներկով	100 մ <sup>2</sup>	0.94	229975.00	216176.50
8	Ղոնների և պատուհանների թեքությունների ներկում կիսափայլուն լատեքսային ներկով	100 մ <sup>2</sup>	0.18	274750.00	49455.00
9	Սվաղի անկյունակ	գմ	45.00	120.00	5400.00
10	Կապրոնե ցանց ներքին հարդարման համար	100 մ <sup>2</sup>	0.14	20135.00	2818.90
<b>Էլեկտրական լուսավորության ցանց 4</b>					

*Handwritten signature*



1	2	3	3	5	6
1	Լուսատու առաստաղային լյումինեսցենտային լամպով 220Վ, 2x36Վտ / կոմպլեկտ - լամպով, մեկնարկիչով/	հատ	6	18000.00	108000.00
2	Լուսատու էվակուացիոն լյումինեսցենտային լամպով, 220Վ, 1x18Վտ	հատ	2	19500.00	39000.00
3	Չաղորդալարի անցկացում պղնձե, մեկուսացված, բաժանիչ հիմքով, հատվածքը ՊՊՎ 2*2.5մմ2	100 մ	0.80	37000.00	29600.00
4	Չաղորդալարի անցկացում պղնձե, մեկուսացված, բաժանիչ հիմքով, հատվածքը ՊՊՎ 1*2.5մմ2	100 մ	0.80	18000.00	14400.00
5	Անջատիչ նորմալ տարբերակի, միաբևեռ, թաքնված տեղադրման համար 220Վ,6Ա	հատ	3.0	1950.00	5850.00
6	Տուփ վարդակների և անջատիչների	100հտ	0.03	55000.00	1650.00
7	Ելուղավորիչ տուփ	100հտ	0.02	58000.00	1160.00
8	Երկաթակապ	100հտ	1.80	1000.00	1800.00
9	Ակոսների փորում 20*40	100մ	0.80	45000.00	36000.00
10	Ակոսագծերի գաջի սվաղում	100մ <sup>2</sup>	0.048	250000.00	12000.00
<b>Աստիճանավանդակ 5</b>					
<b>Քանդման աշխատանքներ</b>					
1	Առկա մետաղական բազրիքի ապամոնտաժում	100մ	0.31	50170.00	15552.70
2	Գաջի սվաղի քանդում պատերից	100 մ <sup>2</sup>	1.40	19700.00	27580.00
3	Պատերի և առաստաղների մաքրում հին ներկից	100մ <sup>2</sup>	1.24	10400.00	12896.00
4	Շին.աղբի բարձում ինքնաթ.ձեռքով	տն	7.54	770.00	5805.80
5	Տեղավորում 13կմ	տն	7.54	3200.00	24128.00
<b>Բազրիք</b>					
1	Մետաղական բազրիքի տեղադրում փայտե բռնածողով / h-0,9մ /	մ	31.2	53750.00	1677000.00
<b>Երեսապատման աշխատանքներ</b>					
1	Աստիճանաքայլերի երեսապատում կերամոզրանիտ սալերով / IMOLA, Micron S60BG 30x60 չափի աստիճան /	մ2	36.225	56210.00	2036207.25
2	Աստիճանաքայլերի ճակատային հատվածի երեսապատում կերամոզրանիտ սալերով / IMOLA, Micron 36BG 30x60 չափի սալիկ /	մ2	15.525	37050.00	575201.25
3	Աստիճանահարթակների երեսապատում կերամոզրանիտ սալերով / IMOLA, Micron 36BG 30x60 չափի սալիկ /	մ2	33.195	31840.00	1056928.80
4	Կերամոզրանիտ սալերով շրիշակների կառուցում / IMOLA, Micron 36BG 30x60 չափի սալիկ /	մ2	6.521	44940.00	293053.74
<b>Չաղորդման աշխատանքներ</b>					
1	Պատերի սվաղում գաջի շաղախով	100 մ <sup>2</sup>	1.12	237630.00	266145.60
2	Պատերի քսահարթում գաջի շաղախով բարելավված որակի	100 մ <sup>2</sup>	0.28	138200.00	38696.00
3	Պատերի գաջի սվաղի նորոգում մինչև 10մ2	մ <sup>2</sup>	46.56	2640.00	122918.40
4	Կախովի առաստաղի իրականացում 8,5մմ գիպսակարտոնե սալերով ցինկապատ մետաղական պրոֆիլներով կարկասի վրա	մ2	52.58	4245.00	223202.10
5	Կախովի առաստաղի պատրաստման համար պրոֆիլի արժեքը	գմ	223.47	570.00	127377.90
6	Պատերի բարելավված ներկում կիսափայլուն լատեքսային ներկով	100 մ <sup>2</sup>	3.10	229975.00	712922.50
7	Առաստաղների բարելավված ներկում կիսափայլուն լատեքսային ներկով	100 մ <sup>2</sup>	0.53	229975.00	121886.75
8	Ղեկների և պատուհանների թեքությունների ներկում կիսափայլուն լատեքսային ներկով	100 մ <sup>2</sup>	0.18	274750.00	49455.00
9	Սվաղի անկումնակ	գմ	45.00	120.00	5400.00
10	Կապրոնե ցանց ներքին հարդարման համար	100 մ <sup>2</sup>	0.16	20135.00	3221.60
<b>Էլեկտրական լուսավորության ցանց 5</b>					
1	Լուսատու առաստաղային լյումինեսցենտային լամպով 220Վ, 2x36Վտ / կոմպլեկտ - լամպով, մեկնարկիչով/	հատ	6	18000.00	108000.00
2	Լուսատու էվակուացիոն լյումինեսցենտային լամպով, 220Վ, 1x18Վտ	հատ	2	19500.00	39000.00
3	Չաղորդալարի անցկացում պղնձե, մեկուսացված, բաժանիչ հիմքով, հատվածքը ՊՊՎ 2*2.5մմ2	100 մ	0.80	37000.00	29600.00
4	Չաղորդալարի անցկացում պղնձե, մեկուսացված, բաժանիչ հիմքով, հատվածքը ՊՊՎ 1*2.5մմ2	100 մ	0.80	18000.00	14400.00
5	Անջատիչ նորմալ տարբերակի, միաբևեռ, թաքնված տեղադրման համար 220Վ,6Ա	հատ	3.0	1950.00	5850.00
6	Տուփ վարդակների և անջատիչների	100հտ	0.03	55000.00	1650.00
7	Ելուղավորիչ տուփ	100հտ	0.02	58000.00	1160.00
8	Երկաթակապ	100հտ	1.80	1000.00	1800.00
9	Ակոսների փորում 20*40	100մ	0.80	45000.00	36000.00
10	Ակոսագծերի գաջի սվաղում	100մ <sup>2</sup>	0.048	250000.00	12000.00
<b>Մաս N2</b>					
<b>ՀՀ ֆինանսների նախարարության առաջին հարկի աջակողմյան հատվածի ընթացիկ նորոգում</b>					
<b>Քանդման աշխատանքներ</b>					
1	Մետաղապատե և ալյումինե ապակեպատ միջնավահանների ապամոնտաժում	100 մ <sup>2</sup>	0.77	129710.00	99876.70
2	Գաջի սվաղի քանդում պատերից	100 մ <sup>2</sup>	9.95	19700.00	196015.00
3	Քաթանից առաստաղի քանդում փայտյա կարկասի հետ միասին	մ2	251.90	455.00	114614.50



*Handwritten signature*


1	2	3	3	5	6
4	Պատերի մաքրում հին ներկից	100մ <sup>2</sup>	12.19	10400.00	126776.00
5	Գոյություն ունեցող դռների քանդում ներառյալ փայտյա պառակալները	100 մ <sup>2</sup>	2.83	129700.00	367051.00
